

A 13.00.01
Ք - 14

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԺԱՆՆԱ ՍԱՄՎԵԼԻ

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԴԴՐՈՑՈՒՄ

ԺԳ. 00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2008

Առենախոսության բեման հաստատվել է Խ. Արուսեանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր Լ. Թ. Ասատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր Ա. Վ. Արբահանյան
Մանկավարժական գիտությունների թեկնածու Ս. Մ. Խրիմյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Գ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Առենախոսության պաշտպանությունը կայանալու է 2008թ. մայիսի 15-ին ժամը 14:00-ին Խ. Արուսեանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՅ-ի 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Առենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Արուսեանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2008թ. ապրիլի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտ. թեկնածու՝


- 2 -
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԿԱՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

Ա. Ա. ԶՈՎՅԱՆԿՈՒՅԱՆ

1686-2008

ԴԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Դետազոտության արդիականությունը: Դպրոցի սոցիալական դերը գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական պայմաններում աճող սերնդին կյանքին նախապատրաստելն է:

Սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխությունները իրենց հետևից բերում են կրթության կազմակերպման և նրա որակի նկատմամբ հասարակական, պետական պահանջների և սոցիումի պահանջարկի փոփոխություններ՝ դասավանդվող առարկաների ցանկի ընդլայնում, կրթության բովանդակության նորացում, նոր առարկաների ներմուծում, որպեսզի սովորողները հնարավորինս օպտիմալ կերպով նախապատրաստվեն ժամանակակից կյանքի պահանջներին, որը և պայմանավորում է հասարակության առաջընթացը:

Կրթական գործընթացի յուրահատկությունը պահանջում է կրթական միջավայրի զարգացում, ուսուցման և դաստիարակության նոր համակարգերի մշակում, կրթական նոր տեխնոլոգիաների ներդրում: Դրա հետ կապված ակնհայտ է կրթադաստիարակչական համակարգի մարդասիրացման պահանջումը:

Դեռևս լիարժեքորեն չի մշակված կրթության և դաստիարակության մարդասիրացման ամբողջական տեսություն, հայեցակարգ, լիովին չի գիտակցված կրթության և դաստիարակության մարդասիրացման հակասական բնույթը:

Ժամանակակից դպրոցում այդ հակասությունները ընկած են հասարակության զարգացման զլորալ փոփոխություններում: Սակայն այդ հակասությունների լուծումը մենք գիտարկում ենք որպես մանկավարժական խնդիրների լուծում դաստիարակության գործընթացի առավել բարձր մակարդակում:

Չաշվի առնելով հասարակության և կրթական հաստատությունների զարգացման միտումները՝ պետք է հատուկ խնդրով առանձնացնել այն հակասությունները, որոնք կապված են դպրոցի կրթադաստիարակչական համակարգի զարգացման կառավարման հետ:

Այսօր հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները պայմանավորել են աճող սերնդի ուսուցման և դաստիարակության բնագավառում նոր գերակայությունների առաջացումը: Խոսքը հիմա գնում է ոչ թե բոլորի համար նույն «անձի համակողմանի զարգացման» մասին, այլ յուրաքանչյուր երեխայի անհատական անձնային զարգացման իրավունքի մասին, այսինքն անհատական պահանջումների, ընդունակությունների, հետաքրքրությունների զարգացման:

Կյանքը այսօր պահանջում է մարդու կառավարման օբյեկտից հասարակական հարաբերությունների սուբյեկտի վերածվելու դիրքորոշման վերափոխում, այդ թվում նաև սովորողի՝ ուսուցման և դաստիարակության օբյեկտից սուբյեկտի վերափոխման:

Այս հակասությունների հաղթահարումը հնարավոր է միայն այնպիսի կրթադաստիարակչական համակարգի ստեղծման պարագայում, որտեղ բոլոր հնարավոր պայմանները կստեղծվեն սովորողների զարգացման համար:

Դպրոցի հայեցակարգի և կրթադաստիարակչական համակարգի զարգացման կառավարման տեխնոլոգիայի մշակումը պահանջում է հիմնախնդրի վերաբերյալ մեթոդաբանական մոտեցումների որոշակիացում: Որպես հիմնական մեթոդաբանական մոտեցումներ օգտագործվում են համակարգագործու-

նային, սիներգետիկական. անձնակողմնորոշիչ, երկխոսության և մշակութաբանական մոտեցումները:

Կրթական հաստատությունների այսօրվա ուսումնադաստիարակչական համակարգերը չեն ապահովում սպասվող արդյունքը: Կրթական հաստատություններում չկարգավորված, տարբերայնորեն ձևավորված դաստիարակության գործընթացները հանգեցնում են սովորողների հոգևոր ուղրոտի անկումայնության, դաստիարակվածության ցածր մակարդակին: Հետևաբար, այդ գործընթացները, ինչպես և դպրոցի կրթադաստիարակչական համակարգը կարիք է զգում կարգավորման և կառավարման ամբողջական համակարգի կառուցման: Մասնավորապես, անհրաժեշտություն է առաջանում ոչ միայն կրթադաստիարակչական նոր համակարգի մոդելի մշակման, այլև մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների գործունեության բովանդակության որոշակիացման, այնպիսի տեխնոլոգիաների ստեղծման, որոնց ներդրումը կապահովեն այդ գործընթացների բարձր արդունավետությունը: Գիտության մեջ այդպիսի տեսական մշակումների բացակայությունը պայմանավորել է մեր ատենախոսության թեմայի ընտրությունը «Կրթադաստիարակչական համակարգի կառավարման տեխնոլոգիաները դպրոցում»:

Հետազոտության նպատակն է՝ մշակել այնպիսի կազմակերպչական մանկավարժական պայմաններ, որոնք կապահովեն կրթադաստիարակչական համակարգի արդյունավետ գործունեությունը և դպրոցի սովորողների դաստիարակության որակապես առավել բարձր մակարդակը:

Հետազոտության օբյեկտը դպրոցի կրթադաստիարակչական համակարգի զարգացման կառավարման մանկավարժական տեխնոլոգիաներն են:

Հետազոտության առարկան դպրոցի կրթադաստիարակչական համակարգի ստեղծման ու զարգացման կառավարման գործընթացն է:

Հետազոտության վարկածը հիմնված է այն ենթադրության վրա, որ դպրոցի կրթադաստիարակչական համակարգի զարգացումը և նրա կառավարումը արդյունավետ կլինի, եթե՝

- Բացահայտվի դպրոցի կրթադաստիարակչական համակարգի զարգացման կառավարման ռազմավարությունն ու կառուցվածքը:
- Դպրոցի կրթադաստիարակչական համակարգի կառուցման վերաբերյալ ցուցաբերվի հետևյալ հիմնական մոտեցումները՝ համակարգագործունային, սիներգետիկական, անձնակողմնորոշված, երկխոսության, մշակութաբանական:
- Մշակվի կրթադաստիարակչական համակարգի կառավարման տեխնոլոգիա, որը թույլ կտա իրականացնել նրա զարգացումը ձևավորումը, գործունեությունը և նորացումը:
- Դպրոցի կրթադաստիարակչական գործընթացի ձևավորման և զարգացման հիմնական կազմակերպչական-մանկավարժական պայմանները լինեն՝ բոլոր սուբյեկտների կողմից կրթադաստիարակչական համակարգի ստեղծման նպատակների ընդունումը, համակարգի սուբյեկտների գործունեության կազմակերպումը՝ ուղղված դրված նպատակների իրականացմանը, համակարգի սուբյեկտների միջև ստեղծագործական հարաբերությունների ձևավորումը, արդյունավետ կրթադաստիարակչական միջավայրի ստեղծումը՝ հիմնված կրթադաստիարակչական գործընթացի բո-

վանդակության, ընտրության և մասնակիցների համագործակցության վրա:

- Որոշակիացվի կրթադաստիարակչական գործընթացի բոլոր մասնակիցների կառավարչական գործունեության բովանդակությունը:
- Դպրոցի կրթադաստիարակչական համակարգի և նրա կառավարման արդյունավետության հիմնական չափանիշներ համարվեն՝ մանկավարժական գործունեության և հարաբերությունների մարդասիրական բնույթը, պրոֆեսիոնալ, կայուն և համախմբված կոլեկտիվի առկայությունը, դպրոցի սովորողների դաստիարակվածության և ուսուցիչների հոգևոր ու մանկավարժական մշակույթի մակարդակը:

Հետազոտության խնդիրներն են.

1. Բացահայտել դպրոցի կրթադաստիարակչական համակարգի էությունը և կառուցվածքը:
2. Մշակել և մանկավարժական գիտափորձով հիմնավորել ժամանակակից դպրոցում կրթադաստիարակչական համակարգի կառուցման տեխնոլոգիան:
3. Բացահայտել դպրոցի կրթադաստիարակչական համակարգի արդյունավետ գործունեության պայմանները:
4. Մշակել կրթադաստիարակչական գործընթացի բոլոր մասնակիցների գործունեության բովանդակությունը դպրոցի կրթադաստիարակչական համակարգի կառավարման նպատակով:
5. Հիմնավորել դպրոցի կրթադաստիարակչական համակարգի և նրա կառավարման արդյունավետության գնահատման ցուցանիշների ամբողջությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերն են կազմում կրթության և դաստիարակության, նրա կառավարման վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական հայեցակարգերը, գաղափարներն ու տեսությունները:

Որպես փիլիսոփայական հիմքեր հանդես են գալիս մարդու՝ որպես սոցիալական օբյեկտի և գործունեության սուբյեկտի, մասին փիլիսոփայամարդաբանական պատկերացումները (Կ.Ա. Աբուլխանովա-Սլավսկայա, Բ.Գ. Անան, Պ.Կ. Անդրեև, Վ.Ի. Վերնադսկի, Լ.Ս. Վիգոտսկի, Ա.Ն. Լեոնտև, Ս.Լ. Ռուբինշտեյն և այլք), իմացության՝ որպես հասարակական-պատմական գործընթացի հոգեբանամանկավարժական հայեցակարգերը (Ջ. Կարնեզի, Ա.Ն. Լեոնտև, Ս.Լ. Ռուբինշտեյն, Ս.Տ. Շաքլի և այլք), կառավարման որպես սոցիալական գործընթացի դիտարկման (Կ.Գ. Աֆանասև, Ա.Ի. Բերգ, Է.Գ. Յուրիև և այլք):

Ատենախոսական հետազոտության համար կարևոր նշանակություն են ունեցել մեծ մանկավարժների՝ Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի, Ա. Բախաթյանի, Ս. Մանդինյանի, Գ. Էդիսյանի, Ա. Մակարենկոյի, Տ. Շաքլու, Վ. Սուխոմլինսկու աշխատությունները:

Որպես տեխնոլոգիական հիմքեր օգտագործվել են մանկավարժական գործընթացի կառավարման տեսությունները (Վ.Ի. Չվերև, Ա.Պ. Կապուստին, Լ.Ի. Մալենկովա, Վ.Ա. Սլաստենին, Պ.Ի. Տրետյակով, Տ.Ի. Շամովա, Ա.Ս. Դուկասյան, Լ.Թ. Ասատրյան, Ա.Ս. Կարապետյան, Մ.Ա. Ասատրյան, Թ.Ֆ. Յուլկյան, Ս.Մ. Խրիմյան և այլք):

Հետազոտության մեթոդները: Հետազոտության առաջադիր վարկածի ստուգ-

ման ու հիմնավորման առաջարկված խնդիրների լուծման համար օգտագործվել են ընդհանուր գիտական և մանկավարժական մեթոդների համալիրը՝

- տեսական վերլուծության և համադրման մեթոդներ՝ կառավարման ընդհանուր տեսությանը, կրթության համակարգի կառավարման տեսությանը վերաբերող գրականության պատմահայեցակարգային վերլուծություն, կրթական համակարգի զարգացման նախագծերի կառուցման տեսական և մեթոդական հիմնավորում,
- դպրոցների աշխատանքային փորձի ուսումնասիրում
- սոցիոլոգիական հարցման, ախտորոշման մեթոդներ՝ հարցազրույց, անկետավորում, թեստային առաջադրանքներ,
- մանկավարժական գիտափորձ,
- գիտափորձի արդյունքների մաթեմատիկական և վիճակագրական մշակման և վերլուծության մեթոդներ:

Չետազոտությունը անցկացվել է երեք փուլով:

1-ին փուլում (1998-2000) կատարվել է հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժական, մեթոդական, փիլիսոփայական, սոցիոլոգիական, հոգեբանական գրականության վերլուծություն և տեսական իմաստավորում: Արդյունքում սահմանվել են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, մշակվել է աշխատանքային վարկածը, որոշակիացվել է հետազոտության բազան, տեսական և փորձարարական հետազոտության մեթոդները: Այս փուլում իրականացվել է արձանագրող գիտափորձ՝ ուսումնասիրվել են դպրոցի կրթադաստիարակչական համակարգի ձևավորմանը նպաստող պայմանները:

2-րդ փուլը (2001-2003) նվիրվել է հետազոտության ծրագրի, մեթոդիկայի մշակմանը, սահմանվել են կրթադաստիարակչական համակարգի զարգացման կառավարման տեխնոլոգիաները:

3-րդ փուլը (2004-2006) ներառել է փորձարարական աշխատանքները, որի ընթացքում իրականացվել է դպրոցի կրթադաստիարակչական համակարգի զարգացման տեխնոլոգիաների արդյունավետության ստուգումը, վերլուծվել ու ընդհանրացվել են ձևավորող գիտափորձի արդյունքները, ձևակերպվել են հիմնախնդրի վերաբերյալ եզրակացությունները, ձևավորվել հետազոտության արդյունքները:

Չետազոտության գիտական նորույթը և տեսական նշանակությունը.

- Բացահայտվել է դպրոցի կրթադաստիարակչական համակարգի էությունը և կառուցվածքը, նրա համակարգաձևավորող բաղադրիչները:
- Բացահայտվել է դպրոցի կրթադաստիարակչական համակարգի գործունեության և զարգացման արդյունավետության մանկավարժական պայմանները:
- Չիմնավորվել է կրթադաստիարակչական համակարգի կառուցման գործառնության տեխնոլոգիան:
- Մշակվել է դպրոցի տնօրենների և կրթադաստիարակչական գործընթացի բոլոր մասնակիցների գործունեության բովանդակությունը:
- Չիմնավորվել է դպրոցի կրթադաստիարակչական համակարգի և նրա կառավարման արդյունավետության գնահատման չափանիշների ամբողջությունը:

Չետազոտության գործնական նշանակությունն այն է, որ

- մանկավարժական գիտափորձի բոլոր դրույթներն ու եզրակացությունները հաստատվել են գործնականում և կարող են երաշխավորվել դպրոցի կրթադաստիարակչական համակարգի ստեղծման և զարգացման կառավարման գործընթացում:
 - Դպրոցի կրթադաստիարակչական համակարգի կառավարման առաջարկվող տեխնոլոգիան և նրա բոլոր մասնակիցների կառավարչական գործունեության բովանդակությունը, նրա արդյունավետության գնահատման չափանիշները և որոշակիացված կառավարման մեխանիզմները կարող են օգտագործվել այլ կրթական հաստատություններում:
 - Չետազոտության նյութերը կարող են օգտագործվել դպրոցի տնօրենների, փոխտնօրենների, ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման համակարգում:
- Չետազոտության բազան** են հանդիսացել Երևանի թիվ 56, 82, 88, 145 դպրոցները:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

- Կրթադաստիարակչական համակարգի էությունը, որը որոշվում է նրանում ընթացող գործընթացների ամբողջականությամբ, դպրոցի և նրա բոլոր սուբյեկտների զարգացմամբ,
- դպրոցի կրթադաստիարակչական համակարգի կառուցվածքը՝ որպես այն կազմող բաղադրամասերի ամբողջություն՝ համակարգի նպատակները, գործունեությունը, որոնք ապահովում են նրա իրականացումը, համակարգի միջավայրը և նրա կառավարումը,
- դպրոցի կրթադաստիարակչական համակարգի արդյունավետությունը որոշվում է նրա կառուցման տեխնոլոգիայով, որն իր մեջ ներառում է համակարգի կառուցման նպատակների և խնդիրների մշակումը, գործունեության առաջատար ձևերի ընտրությունը, դաստիարակչական գործունեության տեսակների և ձևերի որոշակիացումը, դպրոցի կենսագործունեության միջավայրի ձևավորումը, կրթադաստիարակչական համակարգի կառուցման փուլերի որոշակիացումը, խնդիրների և պայմանների բացահայտումը, որոնց առկայության պարագայում ընթանում է նրա ձևավորումը, գործունեությունը և նորացումը,
- դպրոցի կրթադաստիարակչական համակարգի ստեղծման և զարգացման կառավարման հաջողությունը ապահովվում է նպատակների միասնությամբ, յուրաքանչյուր մասնակցի գործունեության կոնկրետ բովանդակությամբ, ծրագրված նպատակներին հասնելուն ուղղված նրանց փոխգործակցությամբ,
- դպրոցի դաստիարակչական համակարգի զարգացման արդյունավետությունը ապահովվում է հետևյալ կազմակերպական-մանկավարժական պայմանների ստեղծման և իրացման կառավարմամբ՝
 - ա) կրթադաստիարակչական համակարգի սուբյեկտների գործունեության կազմակերպում՝ ուղղված դրված նպատակների իրացմանը,
 - բ) համակարգի սուբյեկտների համագործակցության կազմակերպում,
 - գ) համակարգի սուբյեկտների միջև հարաբերությունների ստեղծում,
- դաստիարակող միջավայրի ձևավորում կրթադաստիարակչական գործընթացի բովանդակության ընտրության հիման վրա,

- դպրոցի կրթադաստիարակչական համակարգի կառավարման համակարգի ստեղծում:

Հետազոտության փորձաքննությունը և արդյունքների վերլուծությունը կատարվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 2005 թվականին գիտագործնական համաժողովում, ընդհանուր մանկավարժության ամբիոնում, Երևանի թիվ 56, 82, 88, 145 դպրոցներում:

Հետազոտության հավաստիությունը և հուսալիությունը ապահովված է՝

- հիմնախնդրի ուսումնասիրմանը համակարգային և միջառարկայական մոտեցումներով,
- ելակետային դրույթների մեթոդաբանական և տեսական հիմնավորվածությամբ,
- անձի զարգացման ժամանակակից հայեցակարգի ընդհանուր դրույթների հետ տեսական վերլուծության արդյունքների համադրվածությամբ,
- հետազոտության նպատակների և խնդիրներին համահունչ մեթոդների համալիրի կիրառմամբ,
- մաթեմատիկական վիճակագրության մեթոդների օգտագործմամբ:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրափակումից և օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է 172 գրական աղբյուր և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 177 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի հրատապությունը, որոշված են նպատակը, հետազոտության օբյեկտը, առարկան, խնդիրները, ձևակերպված է վարկածը: Ներկայացված են հետազոտության մեթոդաբանական աղբյուրները, մեթոդիկան, նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության փորձաքննությունն ու կառուցվածքը:

Ատենախոսության «Կրթական գործընթացի կառավարման տեսական-մեթոդաբանական հիմունքները» խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երկու ենթագլխից: **Առաջին ենթագլխում՝ «Կրթական գործընթացի կառավարման հոգեբանամանկավարժական նախադրյալները»**, բացահայտված են կրթության կառավարման վերաբերյալ մեթոդաբանական մոտեցումներն ու հոգեբանամանկավարժական նախադրյալները: Ցույց է տրված, որ կրթադաստիարակչական գործընթացի կառավարումը՝ որպես ժամանակակից հիմնախնդիր, դարձել է հոգեբանական, սոցիոլոգիական, մանկավարժական հետազոտությունների օբյեկտ: Դիտարկված են հայրենական և արտերկրյա մի շարք գիտնականների հայեցակարգային դրույթները կրթադաստիարակչական գործընթացի կառավարման արդյունավետության ապահովման խնդիրների վերաբերյալ: Կրթական համակարգի կառավարումը սահմանված է որպես կազմակերպական մանկավարժական գործընթաց, որն իրականացվում է տարբեր մեթոդների և միջոցների օգնությամբ, ինչպես ամբողջ ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման, այնպես էլ օպտիմալ արդյունքների հասնելու

համար: Հենվելով դպրոցում կրթական գործընթացի կառավարման գիտության և պրակտիկայի զարգացման ռազմավարական ուղղությունների վրա՝ մենք դպրոցում կրթական գործընթացի կառավարման վերլուծության և մոդելավորման նկատմամբ մեթոդաբանական պահանջների թվին դասել ենք հետևյալ մոտեցումները՝

1. Իրավիճակային մոտեցումը, որը որոշում է կրթական գործընթացի կառավարման համակարգի գործառնության և զարգացման համար առավել կարևոր ներքին պայմանները,
2. Կիրենտիկական մոտեցումը՝ որպես կրթական գործընթացի առանձնահատկությունների կառավարման մեխանիզմների համապատասխանություն,
3. Համակարգային մոտեցումը՝ որպես ամբողջականության անհրաժեշտ համապատասխանության գրավական,
4. Սիներգետիկական մոտեցումը՝ որպես ներդաշնակ փոխգործակցություն և էվոլյուցիոն զարգացում.
5. Մանկավարժական մոտեցումը՝ որպես կրթության ոլորտի յուրահատկության հաշվառում:

Ելնելով նշվածից՝ սահմանվել են կրթական գործընթացի կառավարման ընդհանուր նպատակը և արդյունավետության չափանիշները: Ներկայացված է պետական պահանջներին համապատասխան մեր կողմից մշակված կրթության համակարգի մոդելի կառուցվածքը: Բնութագրված է դպրոցի կրթական գործընթացի կառավարման տեխնոլոգիան, որը պարունակում է դպրոցում կրթական գործընթացի կառավարման մանկավարժական պայմանների և իրավիճակային գործոնների ամբողջությունը:

Առանձնացված են այն մանկավարժական պայմանները, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում սովորողների կրթվածության մակարդակի բարձրացման վրա:

Բացահայտված են կառավարման արդյունավետության հիմնական ցուցանիշները:

Մեր կողմից իրականացված գործոնային վերլուծության արդյունքները թույլ տվեցին բացահատելու, որ կրթական գործընթացի կառավարումը առավելապես պայմանավորված է մանկավարժական գործունեքով և երկրի սոցիալ-տնտեսական պայմաններով: Հիմնախնդրի լուծմանը այսպիսի մոտեցումը պահանջում է կառավարման լավագույն մոդելի ստեղծում:

Երկրորդ ենթագլխում՝ «Կրթական գործընթացի կառավարման արդյունավետության միջոցներն ու ձևերը հանրակրթական դպրոցում» ցույց է տրված, որ սոցիալական համակարգերի կառավարման տեսության բոլոր գիտական ուղղությունները (այդ թվում նաև կառավարման համակարգը) հենվում են իրավիճակային մոտեցման միասնական հայեցակարգի վրա, որը ենթադրում է միջավայրի պայմանների, կոնկրետ իրավիճակի և դրա հիման վրա կառավարման համակարգի յուրահատուկ մոդելի մշակում՝ ելնելով հետևյալ դիրքորոշումներից և հայեցակարգային դրույթներից՝

- դպրոցում կրթական գործընթացի կառավարման համակարգը պատկերացնել որպես բաց սոցիալ-մանկավարժական համակարգ,
- կրթական գործընթացի կառավարման համակարգի գործունեության նպատակը համարել դպրոցականի կրթության որակը.

• դպրոցում կրթական գործընթացի կառավարման արդյունավետության չափանիշներ համարել՝

ա) կառավարման նպատակի համապատասխանության աստիճանը սահմանված և ենթադրվող պահանջներին,

բ) ռեսուրսների առկայությունը (մարդկային, գիտամեթոդական, նյութատեխնիկական և ժամանակային):

Ներկայացված է դպրոցում կրթական գործընթացի արդյունավետ կառավարման ալգորիթմի բլոկ-սխեման՝ որպես կառավարող և կառավարվող ենթահամակարգերի նպատակաուղղված փոխներգործություն՝ հակադարձ կապով:

Ներկայացված են կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման ուղղված միջոցառումները և մեր կողմից մշակված ու ծրագրավորված մի քանի դասերի համառոտ բովանդակությունը և նմուշօրինակները, որոնցում կիրառված են ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ՝ ներառյալ վիրտուալ լաբորատորիայի կիրառումը:

Որպես կրթադաստիարակչական գործընթացի կառավարման արդյունավետության պայման՝ ներկայացված են մեր կողմից մշակված սկսնակ ուսուցչի մասնագիտական աճի ծրագիրը և մեթոդական պատրաստվածության չափանիշները, մեթոդիավորման նախագահի և փոխտնօրենի՝ սկսնակ ուսուցիչների հետ աշխատելու ծրագիրը, ուսուցչի ստեղծագործական լաբորատորիայի բովանդակությունը:

Հիմնավորված է, որ կրթադաստիարակչական գործընթացի կառավարման կարևորագույն գործառույթը ներդպրոցական վերահսկողությունն է: Ներկայացված է մեր կողմից մշակված ներդպրոցական վերահսկողության մոդելը:

Երկրորդ՝ «Դպրոցի դաստիարակչական համակարգի զարգացման կառավարման գիտատեսական և մեթոդաբանական հիմքերը» խորագիրը կրող, գլուխը բաղկացած է երկու ենթազվիսից:

Առաջին ենթազվիսում՝ «Դաստիարակչական համակարգերի զարգացման հիմնախնդրի տեսությունը և պրակտիկան» դիտարկված են «դաստիարակություն» հասկացության սահմանման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները:

Մարդասիրացման գաղափարների լույսի տակ մեր կողմից դաստիարակությունը դիտվում է որպես որոշակի սոցիալ-տնտեսական պայմաններում մարդու մշակութահարմար զարգացման նպատակասլաց գործընթաց, որում երեխան հանդես է գալիս որպես մշակույթի օբյեկտ և սուբյեկտ: Դիտարկված են դաստիարակության կարևորագույն գործառույթները և նպատակները, նրա բովանդակությանը ներկայացվող պահանջները:

Հիմնավորված է, որ դպրոցի՝ որպես սոցիալական հաստատության, ժամանակակից առավել կարևորագույն խնդիրը դաստիարակչական գործընթացի կառավարումն է: «Դաստիարակչական գործընթաց» դիմաձիկ համակարգի մեջ մտնում են դաստիարակության սուբյեկտներն ու օբյեկտները, նրանց միջև զանազան կապերն ու պայմանները, որոնք իրականացնում են դրանց փոխներգործակցությունը:

Բացահայտված է «դաստիարակություն» և «դաստիարակչական գործընթաց» հասկացությունների էությունը:

Դիտարկված և վերլուծված են դաստիարակչական համակարգերի ձևա-

վորման փուլերը: Այսօր աշխարհում կան բազմաթիվ դաստիարակչական համակարգեր, որոնք ունեն որոշակի փիլիսոփայական ուսմունքի վրա հիմնված իրենց տեսական մոդելը:

Ներկայացված համակարգերի համեմատական վերլուծության հիման վրա բացահայտված են դրանց տիպական առանձնահատկությունները: Դրա հիման վրա առանձնացված են դաստիարակչական համակարգերի երկու խումբ.

- համակարգեր, որտեղ մեծահասակն ու երեխան դաստիարակության նպատակ են,

- համակարգեր, որտեղ մանկավարժն ու սանը հանդես են գալիս որպես այլ նպատակների նվաճման միջոց:

Մանկավարժների ու սովորողների գործունեության բովանդակությունը որոշիչ է համարվում այս կամ այն դաստիարակչական համակարգի գերակայությունների ընտրության մեջ:

Ուսումնասիրելով դաստիարակչական համակարգերի պատմական հարուստ փորձը՝ արվել է հետևյալ ընդհանրացված հետևությունը. որքան շատ սուբյեկտներ են ընդգրկված դրա կենսագործունեության ոլորտում, այնքան բարձր է տվյալ համակարգի դաստիարակչական արդյունքը:

Երկրորդ ենթազվիսում՝ «Դպրոցի դաստիարակչական համակարգի ձևավորման մեթոդաբանական հիմքերը», հիմնավորված է «համակարգ» հասկացության օրգանական կապը «ենթահամակարգ», «համակարգի տարր», «համակարգ», «կապ», «հարաբերությունների ամբողջականություն», «կառուցվածք» հասկացությունների և դրանց հիմնական բնութագրերի հետ:

Դպրոցի դաստիարակչական համակարգը՝ որպես ամբողջական սոցիալական մարմին, ձևավորվում է դաստիարակության հիմնական բաղադրիչների ինտեգրացման ընթացքում և օժտված է այնպիսի ինտեգրալ բնութագրերով, ինչպիսիք են ուսումնական հաստատության կենսածնը կամ «դպրոցի ոգին», որն ամփոփում է սովորողների վրա հզոր ու մշտապես գործող դաստիարակչական ներգործությունը: Ընդ որում, այնպիսի փոխկապակցված բաղադրիչների կարգավորվածությունը, ինչպիսիք են՝ դաստիարակների անձը, նրանց կոլեկտիվ գործունեությունն ու հաղորդակցումը, դաստիարակների և սաների՝ որպես անձի դաստիարակության ու զարգացման սուբյեկտների, փոխգործակցությունը ու շփումները, պայմանների բազմազանությունը՝ որպես ուսումնական հաստատության կոլեկտիվի արդյունավետ դաստիարակչական գործունեության աղբյուրներ ու գործոններ, առանցքային են համարվում «դպրոցի դաստիարակչական համակարգ» հասկացության բնութագրման մեջ:

Դպրոցի դաստիարակչական համակարգն ունի բարդ կառուցվածք: Նրա բաղադրիչներն են՝ ելակետային հայեցակարգում արտահայտված նպատակները, դրա իրականացումն ապահովող գործունեությունը, գործունեությունը կազմակերպող և դրան մասնակցող սուբյեկտները, գործունեության ու շփման ընթացքում առաջացող հարաբերությունները, որոնք ինտեգրացնում են սուբյեկտներին մեկ ընդհանրության մեջ, որի կառավարումը ապահովում է այդ համակարգի ամբողջականությունն ու զարգացումը:

«Դաստիարակչական համակարգ» հասկացության տարբեր մեկնաբանումների համադրումը հնարավորություն ընձեռեց տալ այդ հասկացության հետևյալ հեղինակային մեկնաբանումը. դաստիարակչական համակարգն ամբողջական,

սոցիալ-մանկավարժական երևույթ է, որը միասնական նպատակասլաց դաստիարակչական գործընթացում միավորում է դպրոցի ներքին ու արտաքին կյանքի բոլոր գործընթացները, որոնք ապահովում են նրա կոլեկտիվների և նրանց կենսագործունեության յուրաքանչյուր սուբյեկտի անձի զարգացումը:

Դիտարկված և բնութագրված են դաստիարակչության նկատմամբ համագործակցային և սիներգետիկ մոտեցումների էությունը:

Մեր կողմից նշվում է, որ դաստիարակչական համակարգի ստեղծման գործընթացում կիրառվել են մշակութաբանական, մարդասիրական, անձնակողմնորոշիչ մոտեցումներ, որոնք հնարավորություն են տալիս բարձրացնելու երեխայի ակտիվությունը՝ որպես դաստիարակչական գործընթացի սուբյեկտի, ընդլայնելու նրա անձի ազատության, կենսագործունեության, ինքնորոշման սահմանները:

Դպրոցական դաստիարակչական համակարգի գործառնության արդյունավետությունը պայմանավորված է այն հարաբերություններով, որոնք համատեղ գործունեության ընթացքում ձևավորվում են մեծահասակների ու երեխաների միջև: Բայց դպրոցի ցանկացած համակարգ գտնվում է միջավայրի հետ անխզելի միասնության մեջ, և այդ հարաբերությունների կշռույթում այն դրսևորվում է իր ամբողջականությամբ:

Հիմնավորված է, որ դպրոցում ստեղծված դաստիարակչական միջավայրի շնորհիվ սովորողները հնարավորություն են ունենում բավարարելու իրենց կրթական, ստեղծագործական պահանջմունքները ոչ միայն դասերի, այլև նախասիրական և արտաուսումնական պարապմունքների ընթացքում, իսկ ծնողները՝ իրենց մանկավարժական մշակույթը: Միջավայրը քննության է առնված՝ որպես ամբողջ համակարգի գործունեության ու նորացման վրա ազդող գործոն: Կատարելագործելով միջավայրը՝ կարելի է բարելավել դաստիարակչական ողջ համակարգը՝ համապատասխանաբար փոխելով դպրոցական հանրության կենսակերպը՝ սովորողների անձնային զարգացումն ուղղորդելով նպատակահարմար հուն:

Ելնելով դաստիարակչական համակարգերի կառավարման էության բնութագրման մեթոդաբանական մոտեցումներից՝ առանձնացված են այդ համակարգերի էական սկզբունքները, գիտականության, պլանավորման, աշխատանքի արդյունքների նկատմամբ նյութական ու բարոյական շահագրգռության, մանկավարժական կադրերի ճիշտ ընտրության, տեղաբաշխման ու կարգուկանոնի: Դաստիարակչական համակարգի կառավարումը ենթադրում է դաստիարակչական նպատակների առաջադրում, դրան համապատասխան կոլեկտիվի կենսագործունեություն, դրա միջավայրում առաջացող հարաբերությունների վերլուծություն ու կանոնակարգում, բարենպաստ ներքին ու արտաքին պայմանների ստեղծում անձի զարգացման համար, կոլեկտիվի գործունեության կառավարման, համակառավարման, ինքնակառավարման ու ինքնակարգավորման նպատակահարմար զուգորդման միջոցների ընտրություն: Դաստիարակչական համակարգի՝ որպես ամբողջական մարմնի, կառավարումը ենթադրում է մի շարք առանձնահատկությունների առկայություն՝ մանկավարժների կողմից նոր տիպի մտածողության յուրացում, կառավարման օբյեկտների ինքնուրույնության մեծացում, ստեղծագործական որակների ներմուծում կառավարչական գործունեության մեջ, համակարգի «ներքին» կառավարման բաժնի անշեղ ավելացում և

դրսից վարչական կառավարման բաժնի համապատասխան նվազում, կառավարման գործընթացի մեջ ոչ միայն մանկավարժական կոլեկտիվի անդամների, այլև հենց դպրոցականների ներգրավում՝ որպես սուբյեկտներ:

Ժամանակակից դպրոցի դաստիարակչության կառավարման արդյունավետ մոդելի կառուցման համար անհրաժեշտ է համակարգազոյացնող բաղադրիչների ու կազմակերպական ձևերի հավաքակազմի ընտրություն:

Դաստիարակչական համակարգի կառավարման մոդելի ստեղծման գործընթացը, որի մեջ համակարգազոյացնող գործոնը դաստիարակչական հարաբերություններն են, մենք իրականացրել ենք կառավարչական գործողությունների իրականացման հիման վրա:

Դպրոցի դաստիարակչական համակարգի կառավարման մասեր են համարվում ինքնակառավարումը և համակառավարումը:

Դպրոցական ինքնավարության համակարգն ունի երեք մակարդակ՝ դասարանային աշակերտական ինքնավարություն, դպրոցական աշակերտական ինքնավարություն, դպրոցական ինքնավարություն: Առաջին մակարդակի կառուցվածքում գործունեության առաջատար տեսակներն են ճանաչողական գործունեությունը, ինքնասպասարկումը, գեղարվեստական-գեղազիտական, մարզական-առողջարարական ու տեղեկատվական գործունեությունը: Գործունեության յուրաքանչյուր տեսակին համապատասխան՝ ընտրվում են ինքնավարության մարմինները, որոնք ունեն աշխատանքային մարմիններ՝ հանձնաժողովներ կամ խորհուրդներ:

Աշակերտական ինքնավարությունը, հանդիսանալով համադպրոցական կառավարման օրգանական մասը, գործում է սոցիալական օբյեկտների ու գործընթացների կառավարման տեսության հիման վրա:

Երկրորդ մակարդակի՝ դպրոցական աշակերտական ինքնավարության կառուցվածքի մեջ մտնում են համադպրոցական աշակերտական հանձնաժողովները, որոնք կառավարում են հետևյալ հրահանգաձեռնողական գործառնությունը՝ պլանավորում են դպրոցական աշակերտական կոլեկտիվի գործունեությունը, մշակում դրա իրականացման կոնկրետ ծրագրեր, սովորողների խորհրդի և դպրոցի խորհրդի համար պատրաստում վերլուծական տեղեկատվություն և համադպրոցական կյանքի բարելավման վերաբերյալ առաջարկություններ:

Երրորդ մակարդակը դպրոցական ինքնավարությունն է: Այստեղ առկա է ինքնավարությունը. ինքնավարության զլխավոր մարմինը՝ դպրոցի խորհուրդը, կազմված է ինքնակառավարվող կոլեկտիվների ներկայացուցիչներից: Դպրոցական ինքնավարության գործառնությունն են ռազմավարական նպատակադրվածությունը, որը ներառում է դպրոցի զարգացման և ներդպրոցական կյանքի բարելավման հեռանկարները, ուղղակի և անուղղակի գործողությունների վերաբերյալ որոշումների ընդունումը:

Յետազոտության «Դպրոցի դաստիարակչական համակարգի ձևավորման ու զարգացման մանկավարժական պայմանները» խորագիրը կրող երրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում «Դպրոցի դաստիարակչական համակարգի ձևավորման առանձնահատկությունները և տեխնոլոգիան», բացահայտված են դաստիարակչական համակարգերի ստեղծման և զարգացման առանձնահատկությունները, որոնք հիմք են հանդիսացել հեղինակային մոդելի կառուցման հա-

մար:

Հիմնավորված է, որ դպրոցի դաստիարակչական համակարգի կառավարումը պետք է առաջնորդվի ժողովրդավարական սկզբունքներով՝ կառավարման բոլոր մակարդակներում, ներառյալ ինքնակառավարումը և համակառավարումը:

Դաստիարակության բովանդակությունն ապահովում է սոցիալական հարաբերությունների տարբեր ոլորտներում սոցիալական դերի համալիր իրականացմանն ուղղված մարդու պատրաստակամությունը:

Դաստիարակչական գործունեության տեսակների ու ձևերի որոշման հիմքում ներկայացված են դպրոցում դրա կազմակերպման երեք տեսակներ՝ մանկավարժների մասնագիտական դաստիարակչական գործունեությունը, մանկավարժների ու սովորողների համատեղ դաստիարակչական գործունեությունը և սովորողների դաստիարակչական գործունեությունը:

Բնութագրված են դաստիարակչական համակարգի ստեղծման, զարգացման և կայացման փուլերը: Հիմնավորվում է, որ կայացման փուլում դպրոցի դաստիարակչական համակարգի արդյունավետությունը կախված է մի շարք ներքին և արտաքին առանձնահատկությունների հաշվառումից. դպրոցի դաստիարակչական համակարգի կայացումը պետք է հանդես գա որպես մանկավարժական կոլեկտիվի կարևորագույն նպատակ, դաստիարակչական համակարգի կայացման կառավարումը կլինի ավելի արդյունավետ, եթե իրականացվի սոցիալ-հոգեբանական գործառույթների համալիրը, դպրոցի դաստիարակչական համակարգի կայացման կառավարման արդյունավետության վճռական պայմանը ղեկավարի հեղինակությունն ու համբավն է, կառավարման ոճը, մասնագիտական հասունության մակարդակը, անձնային հատկանիշները, գիտելիքների և գործնական փորձի ինտեգրացումը:

Դպրոցի դաստիարակչական համակարգի կայացման արդյունքը կառավարման օբյեկտների ու սուբյեկտների, դրանց բոլոր օղակների, բաղադրիչների, դրանց կապերի ու հարաբերությունների կառուցվածքի ստեղծումն ու փոխադարձ լրացումն է:

Ներկայացված են դաստիարակչական համակարգի կայացման և նորացման փուլերի խնդիրները: Հիմնավորված է, որ դպրոցի դաստիարակչական համակարգի ստեղծումը պայմանավորված է մանկավարժների և աշակերտների արժեքային համակարգի ձևավորվածության մակարդակով: Ներկայացված են մանկավարժների և սովորողների գլխավոր արժեքները: Նշվում է, որ դպրոցի զարգացման փուլում դաստիարակչական համակարգի գործունեության հիմնական բովանդակությունը զարգացման առանձին գիտափորձերի կամ ամբողջական զարգացման ծրագրերի իրացումն է:

Համակարգի զարգացման կառավարումը սուբյեկտի կողմից որակական փոփոխությունների ներմուծումն է կառավարման օբյեկտի զարգացման մեջ՝ լավագույն արդյունքի հասնելու համար:

Փորձարարական դպրոցների աշխատանքային գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն դպրոցի դաստիարակչական համակարգի գործունեության ռեժիմի մի քանի յուրահատուկ բնութագրեր՝ դաստիարակության մշակված փորձի վերարտադրություն, դաստիարակչական համակարգի առկա ներուժի պահպանում և օգտագործում, օպտիմալ արդյունքների ստացման համար իրենց որակավորումը բարձրացնող մանկավարժների կոլեկ-

տիվի, դաստիարակության ավանդական ծրագրերի և տեխնոլոգիաների օգտագործում, կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծում: Կառավարումը նախատեսված է դաստիարակչական համակարգի առկա ներուժի, դրա գործունեության առկա արդյունքների պահպանման համար:

Հիմնավորված է, որ գործառույթային ռեժիմից զարգացման ռեժիմի անցման շրջանում դպրոցի դաստիարակչական համակարգի նպատակների ու արժեքների իրացումից հետո գալիս է կայուն աշխատանքի շրջանը, որը տևում է այնքան ժամանակ, մինչև դաստիարակչական համակարգը կբավարարվի ձեռք բերված արդյունքներով:

Ձարգացման ռեժիմով աշխատող դպրոցի դաստիարակչական համակարգի կառավարումը ենթադրում է դաստիարակչական համակարգի ամբողջ կառուցվածքի կատարելագործում, անցում կառավարման հորիզոնական կորպորատիվ սկզբունքի:

Երկրորդ ենթազխում՝ «Դպրոցի դաստիարակչական համակարգի զարգացումն ապահովող կառավարման սուբյեկտների գործունեության բնութագիրը», բացահայտված են այն մանկավարժական-կառավարչական պայմանները, որոնք անհրաժեշտ են դպրոցի դաստիարակչական համակարգի կայացման և զարգացման համար:

Առանձնացված և վերլուծված են նաև դպրոցի դաստիարակչական համակարգի գործունեության արդյունավետությանը և նորացումը ապահովող պայմանների ամբողջությունը:

Ներկայացված է մեր կողմից մշակված դաստիարակչական համակարգի բոլոր սուբյեկտների կառավարչական գործունեության բովանդակությունը և կառավարման կառուցվածքը:

Հիմնավորված է, որ դաստիարակչական համակարգի զարգացման կառավարման արդյունավետությունը որոշվում է դաստիարակչական աշխատանքների սուբյեկտների կառավարչական մշակույթի զարգացմամբ: Ներկայացված է մեր կողմից մշակված դաստիարակչական աշխատանքների կառավարման մշակույթի զարգացման ձևերը:

Երրորդ ենթազխում՝ «Դպրոցի դաստիարակչական համակարգի զարգացման կառավարումը և արդյունավետության գնահատումը», ներկայացված է մանկավարժական գիտափորձի արդյունքները, բնութագրված է ձևավորող գիտափորձի ընթացքը:

Հիմնավորված է, որ դպրոցի անցումը պետական «հաստատությունից» դեպի դաստիարակչական համակարգի, դաստիարակչական համակարգի շարժումը զարգացման որևէ մակարդակից ավելի բարձր մակարդակի՝ հնարավոր է միայն դպրոցի ամբողջ կոլեկտիվի կատարած նպատակասլաց աշխատանքի արդյունքում: Այդ աշխատանքի հաջողությունը կախված է ամենից առաջ կառավարչական գործունեության կազմակերպումից, որը ներառում է դպրոցի դաստիարակչական համակարգի արդյունավետության ուսումնասիրումը:

Դպրոցի դաստիարակչական համակարգի զարգացման կառավարումը ենթադրում է դրա իրավիճակի ուսումնասիրում: Դաստիարակչական համակարգի արդյունավետության մեծացման, քանակական ու որակական փոփոխությունների ապահովման համար մեր կողմից ուսումնասիրվել է տարբեր գործոնների, պայմանների ազդեցությունը այդ համակարգի կայացման, գործունեու-

թյան և նորացման գործընթացի վրա: Այդ նպատակով ուսումնասիրվել են համակարգի միջանկյալ վիճակները և կատարվել կառավարման օգտագործվող միջոցների արդյունավետության վերլուծություն:

Ելնելով դաստիարակչական համակարգերի տեսության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներից՝ մենք դպրոցի դաստիարակչական համակարգի արդյունավետության ցուցանիշը համարում ենք սովորողների՝ մասնավորապես դպրոցի շրջանավարտների դաստիարակվածության մակարդակը:

Ներկայացված են դաստիարակչական համակարգի արդյունավետության գնահատման չափանիշները.

1. Մանկավարժական և աշակերտական կոլեկտիվներում հարաբերություններ՝ երեք մակարդակով՝ ա) ուսուցիչ-աշակերտ, բ) աշակերտ-աշակերտ, գ) ուսուցիչ-ուսուցիչ:

2. Մանկավարժների, սովորողների և ծնողների կողմից դպրոցի արժեքների, նորմերի և ավանդույթների ընդունման մակարդակը, ինչպես նաև դրանց կայունությունը ժամանակի մեջ:

3. Տևական ժամանակամիջոցում դպրոցի մանկավարժական կոլեկտիվի կարողանումը կազմի և գործունեության հիմնական ցուցանիշների կայունությունը:

4. Դաստիարակչական գործունեության բովանդակային և իրավիճակային բնույթը:

5. Դպրոցում ուսուցիչների և աշակերտների ստեղծագործական գործունեության մակարդակը:

6. Սովորողների և, մասնավորապես, դպրոցի շրջանավարտների դաստիարակվածության, հոգևոր զարգացածության և ընդհանուր մշակույթի մակարդակը:

7. Դպրոցի բարձր հեղինակությունը մանկավարժների, ծնողների, սովորողների, կրթության կառավարման մարմինների տեսանկյունից և այլ դպրոցների մանկավարժների հետաքրքրությունը տվյալ դաստիարակչական համակարգի նկատմամբ:

Դպրոցի աշխատանքի արդյունավետության գնահատականով կարելի է դատել դպրոցի դաստիարակչական միջավայրի զարգացման կառավարման որակի մասին: Դաստիարակչական միջավայրը բարդ և բազմակողմ է, ինչը կանխորոշել է դաստիարակչական համակարգում լրացուցիչ ցուցանիշներ ներմուծելու անհրաժեշտությունը՝ դրա արդյունավետ ազդեցության գնահատման համար:

Ներկայացված է դաստիարակչական միջավայրի արդյունավետության չափանիշները՝ «գործընթացի արդյունքի որակը», «ժամանակի ծախսերը» և «նպատակի նվաճման միջոցների ծախսերը»:

Դպրոցի դաստիարակչական միջավայրի զարգացման գնահատականի հիմքում ընկած են քանակական և որակական ցուցանիշները: Դպրոցի դաստիարակչական միջավայրի զարգացման արդյունքների վերահսկողության ու փորձագիտական գնահատականի համար ներկայացված են մեր կողմից մշակված դաստիարակչական միջավայրի արդյունավետության հետևյալ բաղկացուցիչները.

1. Դպրոցի գործունեության արդյունավետությունը, մանկավարժների ու սովորողների առողջության մակարդակը, սովորողների ընդհանուր մշակութային զարգացման մակարդակը, աշակերտների, ծնողների ու մանկավարժների

համար դպրոցի գրավիչ լինելու աստիճանը, կրթության և դաստիարակության նոր մեթոդիկաների, ծրագրերի ու տեխնոլոգիաների յուրացման աստիճանը:

2. Հարմարավետությունը դպրոցում, փոխհարաբերությունների բնույթը դպրոցում (սոցիալական ու բարոյահոգեբանական մթնոլորտը), ստեղծագործական մթնոլորտի մակարդակը, մանկավարժների ու սովորողների ինքնորոշման հնարավորությունը, միմյանց աջակցություն և օգնություն ցուցաբերելու չափահասների ու երեխաների պատրաստակամության աստիճանը, մանկավարժների ու երեխաների օպտիմալ բեռնվածության մակարդակը:

3. Դաստիարակչական միջավայրի կադրային ու նյութական պաշարները, կարիքները, մարզադահլիճի և ժամանցի սենյակների ուսումնանյութական կահավորման մակարդակը, ուսումնադաստիարակչական գործընթացի ուսումնամեթոդական ապահովվածության մակարդակը:

4. Դաստիարակչական աշխատանքի արդյունավետությունը դպրոցում, դաստիարակչական աշխատանքի որակը դասին, ուսուցիչների ու սովորողների փոխհարաբերությունների մակարդակը, սովորողների հետաքրքրությունն ուսման նկատմամբ, դաստիարակչական աշխատանքի մակարդակը դասարաններում, սովորողների զբաղվածության աստիճանը արտադպրոցական խմբակներում և ակումբներում:

5. Արտադպրոցական դաստիարակչական աշխատանքի արդյունավետությունը, մանկավարժների ու ծնողների համագործակցության մակարդակը, սովորողների ընտանիքների կուլտուրական մակարդակը, սոցիումի տարբեր հիմնարկների հետ դպրոցի կապերի բազմազանությունը, գիտամշակութային օջախների հետ դպրոցի կապերը:

Դաստիարակչական համակարգերի կառավարման արդյունավետության յուրաքանչյուր չափանիշ արտահայտվում է քանակական ու որակական ցուցանիշների համակարգով, որոնցից են՝ աշակերտակենտրոն մասնագիտական-մանկավարժական ուղղվածությունը, դրդապատճառային կառուցվածքում հաղորդակցման պահանջմուտքի առկայությունը, սովորողի՝ որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտի, ընկալումը, մասնագիտական գիտելիքների լիարժեքությունը և առաջընթաց աճը, կառավարող և կառավարվող համակարգերի միջև կապի հաստատման դինամիկությունը և համարժեքությունը, միջանձնային հարաբերությունների կառավարումը «դաստիարակող-դաստիարակվող» համակարգում, սովորողների կողմից որոշակի իրավիճակում ներքին տրամադրվածության և ակնկալիքների ընկալումը, մանկավարժական գործընթացի սուբյեկտի՝ որպես գործիմաց մասնագետի, բնութագիրը:

Բնութագրված են դաստիարակչական համակարգի արդյունավետության բացահայտման ուղղությամբ իրականացված մանկավարժական գիտափորձի արդյունքների վիճակագրական և մաթեմատիկական վերլուծությունը:

Արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս հիմնավորելու, որ

- ուսումնադաստիարակչական գործընթացի որակի կայուն բարձրացման ֆոնի վրա զարգանում է սովորողների արժեքադրդապատճառային ոլորտը: Հաստատուն ձևով նվազում է դպրոցական տագնապալի իրավիճակների մակարդակը,

- կրթական միջավայրում սուբյեկտ-սուբյեկտային հարաբերությունների կառուցման ու առկայության գործոնը որոշիչ է համարվում վերոհիշյալ

պարամետրերի, ցուցանիշների, չափանիշների դիմամիկայի համար.

• ուսուցիչների մանկավարժական արժեքների զարգացման միտումները ամբողջությամբ վերցրած խիստ դրական են. ակնհայտ է անձնակողմնորոշիչ մանկավարժության արժեքների գերակայությունը:

Ստացված ցուցանիշները ներկայացնում են կայուն դրական շարժ, որն արտացոլում է դաստիարակչական համակարգի արդյունավետության մակարդակի աճը: Արդյունավետության ցուցանիշները առավել մեծ նշանակություն ունեն դաստիարակչական համակարգի նորացման փուլում:

Դպրոցի կրթադաստիարակչական համակարգի կառավարման տեխնոլոգիաների ուսումնասիրությունների, կատարած վերլուծությունների և փորձարարական աշխատանքների արդյունքների ամփոփումը հնարավորություն է տալիս անելու հետևյալ հիմնական **եզրակացությունները**.

1. Դպրոցի կառավարման համակարգը ձևավորում է սոցիոմի կրթական ծառայությունների պահանջարկը և որպես զարգացող համակարգ աստիճանաբար ընդլայնում է իր գործունեության ոլորտը՝ օգտագործելով մանկավարժական բոլոր ռեսուրսները: Ներդպրոցական վերահսկողությունը նպաստում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճին ու զարգացմանը, դասավանդման որակի և կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

2. Կրթադաստիարակչական համակարգի արդյունավետությունը որոշվում է դրանում իրականացվող բոլոր գործընթացների և մանկավարժական ու աշակերտական կոլեկտիվների կենսագործունեության զարգացմամբ:

3. Ժամանակակից կրթադաստիարակչական համակարգի կառուցման և գործարկման տեխնոլոգիաներն ապահովում են կառավարման արդյունավետությունը, որն արտահայտվում է նպատակների միասնությամբ, յուրաքանչյուր մասնակցի գործունեության որոշակի բովանդակությամբ և ծրագրված նպատակներին հասնելու համար նրանց փոխգործակցությամբ:

4. Դպրոցի կրթադաստիարակչական համակարգը անցնում է ձևավորման որոշակի փուլեր՝ կայացում, գործունեություն և նորացում, որոնք ապահովվում են որոշակի պայմանների առկայությամբ:

5. Դպրոցի կրթադաստիարակչական համակարգի արդյունավետ կառավարման համար կարևոր նշանակություն ունի համակարգի բոլոր սուբյեկտների կառավարչական գործունեության բովանդակությունը:

6. Դպրոցի դաստիարակչական համակարգի կայացման փուլում կառավարչական գործունեության հիմնական բովանդակությունը՝ դրա հիմնական պայմանների ստեղծման առումով, կազմում են դպրոցի սոցիալական պատվերի կատարումը, մանկավարժական կադրերի ընտրությունն ու բաշխումը և նրանց աշխատանքի որակի վերահսկողությունը, բովանդակային տեսակետից բազմազան դաստիարակչական գործունեության կազմակերպումը, կառավարչական կադրերի ընտրության ու բաշխման իրականացումը, կառավարման կառուցվածքի ստեղծումը և դրա բոլոր տարրերի աշխատանքի կազմակերպումը:

7. Գործունեության փուլում կրթադաստիարակչական համակարգի գործունեության պայմանների ստեղծման համար կառավարչական գործունեության հիմնական բովանդակությունն են համարվում դաստիարակչական գործունեության համարումը ուսուցման գործընթացի հետ և մանկավարժների ու սովորողների նոր ստեղծագործական խմբերի ստեղծումը, մանկավարժական կադ-

րերի նկատմամբ հոգատար վերաբերմունքը, նրանց աշխատանքի զնահատումը և խրախուսումը, դպրոցի կենսագործունեության բոլոր կողմերի վերլուծությունը ուսումնական տարվա վերջին, մանկավարժների ստեղծագործական-հետազոտական խմբերի ստեղծումը՝ դրանց գիտական ղեկավարումը, դպրոցի ինքնավարության մարմնի, դասարանների ներկայացուցիչների խորհրդի ստեղծումը և դրա գործունեության կազմակերպումը:

8. Դպրոցի դաստիարակչական համակարգի նորացման փուլում դրա զարգացման պայմանների ստեղծման համար կառավարչական գործունեության հիմնական բովանդակությունն են կազմում դպրոցի զարգացման ծրագրի ընդունումը, դաստիարակչական գործունեության համակարգայնացումը, առարկայական և միջառարկայական բնույթի մանկական գիտական ընկերությունների ստեղծումը, վերլուծական գործունեության ծառայության կազմակերպումը և դրա գործառույթային մշակումը, մոնիթորինգի կազմակերպումը և դրա արդյունքների ամփոփումը:

Չետագոտության արդյունքում մշակվեց ոչ միայն ղեկավարների ու մանկավարժների, այլև ծնողների ու սովորողների գործունեության բովանդակությունը, որի մեջ կարելի է առանձնացնել դպրոցի սոցիալական պատվերի ձևավորումը, համակառավարման ու ինքնակառավարման մարմինների ստեղծումը, լրացուցիչ կրթության համակարգի զարգացումը, դպրոցի զարգացման ծրագրի մշակումը և ընդունումը:

Փորձարարական աշխատանքների ընթացքում մշակվեցին դաստիարակչական համակարգի, դաստիարակչական միջավայրի և դպրոցի դաստիարակչական համակարգի կառավարման արդյունավետության ընդհանուր և մասնավոր չափանիշները: Ընդհանուր չափանիշներն են. մանկավարժական գործունեության և հարաբերությունների մարդասիրացումը դպրոցում, արհեստավարժ, կայուն և համախմբված մանկավարժական կոլեկտիվի առկայությունը, դպրոցի մանկավարժների ու սովորողների դաստիարակվածության, հոգևոր և մշակութային զարգացման մակարդակը:

Դաստիարակչական համակարգի ստեղծման ընթացքում կայացման փուլից գործունեության, ապա նորացման փուլին անցնելիս կատարվեցին հետևյալ դրական փոփոխությունները՝

- բոլոր մակարդակներով փոխվեց հոգեբանական մթնոլորտը մանկավարժական և աշակերտական կոլեկտիվում (սովորողներ-մանկավարժներ, մանկավարժներ-մանկավարժներ, սովորողներ-սովորողներ), էապես բարելավվեցին դպրոցի կենսագործունեության բոլոր սուբյեկտների փոխհարաբերությունները,

- կայունացավ մանկավարժական կոլեկտիվի համակազմը,

- էապես բարձրացավ սովորողների դաստիարակվածության, կրթվածության և ճանաչողական ակտիվության մակարդակը,

- բարելավվեց դաստիարակչական համակարգի բոլոր բաղադրիչների համագործակցության մակարդակը,

- ուսուցման ու դաստիարակության ավանդական ոլորտների հետ մեկտեղ երևան եկավ ուսուցման ու դաստիարակության փոխհարստացման ոլորտը, որն ունի հարուստ բովանդակություն և գործունեության ձևեր,

- ստեղծվեց կառավարման օպտիմալ համակարգ, որն ընդգրկեց աշակերտական ինքնավարությունը,

- տարբեր ուղղություններով կազմակերպվեց մանկավարժների ու սովորողների նորարարական գործունեություն ,

- մշակվեց կենսագործունեության բոլոր սուբյեկտների հեռանկարային զարգացման ծրագիր:

Ատենախոսության հիմնական դպրոյթներն արտացոլված են հեղինակի հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Թադևոսյան ժ.Ս. Ժամանակակից դասին ներկայացվող պահանջները, Վանաձոր, «Մխիթար Գոշ» հանդես, 2005, թիվ 4, էջ 111-113

2. Թադևոսյան ժ.Ս. Դպրոցի դաստիարակչական համակարգի ձևավորման առանձնահատկությունները և կառուցման տեխնոլոգիան, Երևան, «Մանկավարժական միտք» հանդես, 2006, թիվ 1-2, էջ 75-84

3. Թադևոսյան ժ.Ս. Կրթության և դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաներ (մեթոդաբանություն և տեխնոլոգիա), Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Արտագերս» հրատ., 2006, 183 էջ

4. Թադևոսյան ժ.Ս. Դպրոցի դաստիարակչական համակարգի զարգացման կառավարումը և արդյունավետության գնահատումը, «Կրթության զարգացում» տարեգիրք, Երևան, «Զանգակ-97», 2006, էջ 20-29

ТАДЕВОСЯН ЖАННА САМВЕЛОВНА

ТЕХНОЛОГИИ УПРАВЛЕНИЯ ОБРАЗОВАТЕЛЬНО-ВОСПИТАТЕЛЬНОЙ СИСТЕМЫ В ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 "Теория и история педагогики".

Защита диссертации состоится 15 мая 2008г. В 14.00 на заседании специализированного совета 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 375010, Ереван, ул. Тигран Меци 17

РЕЗЮМЕ

Актуальность темы. В новейших социально-экономических условиях социальной ролью школы является подготовка подрастающего поколения к жизни.

Особенности образовательного процесса требуют развития образовательной среды, разработки новых систем обучения и воспитания, внедрения новых образовательных технологий.

Преодоление противоречий в учебно-воспитательной системе возможно только при внедрении новых технологий.

Актуальность исследования обусловлена не только построением новой модели управления учебно-воспитательной системы, но и обновлением содержания деятельности всех участников педагогического процесса. Вместе с тем очевидна также потребность гуманизации образовательной системы,

поскольку до сих пор не разработана теория и концепция гуманизации, и не обоснована характеристика противоречий в гуманизации образования и воспитания.

Целью исследования является разработка таких организационных педагогических условий и образовательных технологии, которые обеспечат эффективность деятельности учебно-воспитательной системы и высший уровень воспитания учащихся.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, 3 глав, заключения, библиографии и приложения.

Научная новизна и теоретическая значимость исследования:

- В работе выявлены сущность структуры учебно-воспитательного процесса и системообразующие компоненты.
- Выявлены педагогические условия эффективности деятельности и развития учебно-воспитательной системы школы.
- Обоснована технология построения и функционирования учебно-воспитательной системы.
- Разработано содержание деятельности учебно-воспитательного процесса.
- Обоснована целостность критерий оценки эффективности учебно-воспитательной системы и его управления.

Практическая значимость исследования:


- Все положения и выводы педагогического эксперимента обоснованы в практике и гарантируются для создания и развития управления учебно-воспитательной системы школы.
- Предлагаемая технология управления учебно-воспитательной системы школы и содержания управленческой деятельности всех участников, критерии оценивания его эффективности и четкие управленческие механизмы можно применять и в других образовательных учреждениях.
- Материалы исследования можно применять в системе квалификации и аттестации директоров, завучей и учителей.

Апробация результатов исследования. Основные положения исследования обсуждались на заседаниях кафедры общей педагогики в АГПУ им. Х. Абовяна, в научных конференциях и в школах номер 56, 82, 88, 145.

По теме диссертации опубликованы 4 научные работы.

05.02.2013

[Faint, illegible text from the reverse side of the document, appearing as bleed-through or ghosting.]

ՀՀ Ազգային գրադարան

NL1762237

02.05.2013